

02
ՀՈՒԼԻՍԻ
2021



ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏԻ 2020Թ. ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՂՈՐԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ Հաշվեքննիչ պալատի (այսուհետ՝ ՀՊ) 2020թ. ծրագրի շրջանակներում իրականացվել է **13 հաշվեքննություն**: Ընդ որում, նախատեսված է եղել իրականացնել 29 հաշվեքննություն, որից 15-ը չի ավարտվել (պայմանավորված ԿՈՎԻԴ-19 համավարակով ու Արցախյան պատերազմով) և տեղափոխվել է 2021թ. (այդ թվում՝ ՀՀ ՊՆ-ի, ՀՀ ՊԵԿ-ի, կենսաթոշակային համակարգի և ՀՀ առողջապահության նախարարության հաշվեքննությունները), իսկ 1-ը կասեցվել է (ԵԱՏՄ գործունեության մասով՝ տեղափոխվել է 2021-ի երկրորդ կիսամյակ):

2020թ. Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության շրջանակը ներառել է աշխատանքի և սոցիալական ապահովության, ջրային ոլորտի, ոստիկանության, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների, մշակույթի, ճանապարհաշինության, համայնքային և այլ ոլորտներ:

Հաշվեքննողները կիրառել են հաշվեքննության **3 տեսակներ՝**

- **Ֆինանսական,**
- **համապարասխանության,**
- **կադրարդականի:**

Առաջին երկու տեսակների մասով «դրական եզրահանգում» հաշվեքննության կարծիք որևէ հաշվեքննությամբ չի տրամադրվել, իսկ 8-ի մասով տրամադրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» հաշվեքննության կարծիք: Երրորդ՝ **կատարողականի** հաշվեքննություններով ներկայացվել է՝

- **տնտեսական** սկզբունքի չպահպանման՝ թվով **3** հաշվեքննություն,
- **օգտավետության** (ծախսային արդյունավետություն) սկզբունքի չպահպանման՝ թվով **4** հաշվեքննություն,

- **արդյունավետության** (նպատակային արդյունավետություն) սկզբունքի չպահպանման՝ թվով 4 հաշվեքննություն:

Բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման ու կանխարգելման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման համար **ՀՊ կողմից ներկայացվել է 192 առաջարկություն**, որից՝

- **համակարգին միտված՝** թվով 59 առաջարկություն,
- **արդյունքին միտված՝** թվով 50 առաջարկություն,
- **խնդիրների բացահայտմանը, լուծմանը միտված՝** թվով 83 առաջարկություն:

Ընդհանուր առմամբ կազմվել է հաշվեքննության **35 արձանագրություն**, որից 3-ը՝ գաղտնի, ինչպես նաև իրավաբանական անձանց մոտ ստուգման 7 արձանագրություն: Արձանագրություններով բացահայտվել են մի շարք ռիսկեր, մասնավորապես՝

- իրականացվել են ծախսեր, որոնք արժանահավատության ռիսկ են պարունակել,
- կատարվել են ծախսեր, որոնց արդյունավետությունը գնահատվել է ցածր կամ անարդյունավետ,
- իրականացվել են աշխատանքներ, որոնք փաստաթղթերով հիմնավորված չեն եղել, և չեն անցել օրենքով սահմանված գնումների գործընթաց,
- հաշվեքննության ենթարկված կազմակերպությունները պայմանագրեր են կնքել այլ կազմակերպությունների հետ, որոնք չեն համապատասխանել գնումների կազմակերպման մրցույթով հայտարարված պահանջներին կամ չեն հանդիսացել լավագույն առաջարկ ներկայացնողներ,
- հաշվեքննության ենթարկված կազմակերպություններն իրենց տրամադրված պետական ֆինանսական աջակցության միջոցներն օգտագործել են ոչ նախապես սահմանված նպատակով,
- վճարվել են աշխատավարձեր, որոնք հիմնավորված չեն եղել անհրաժեշտ փաստաթղթերով:

Նշենք, որ Հաշվեքննիչ պալատի 2020թ. տարեկան հաղորդման մեջ հաշվետու տարվա արդյունքներով ամփոփված չէ՝ ի վերջո հաշվեքննություններից որքան գումար է վերականգնվել պետական բյուջե, կամ որքան գումար է ենթակա վերականգնման:

Հաշվեքննիչ պալատի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազություն են ուղարկվել 2020թ. իրականացված հետևյալ ֆինանսատնտեսական գործունեության հաշվեքննությունների արդյունքները՝

- ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության,
- ՀՀ ՏԿԵՆ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (գաղտնի):

Ընդհանուր առմամբ, 2017-2020թթ. գործունեության ծրագրերի շրջանակներում իրականացված հաշվեքննությունների արդյունքներով իրավապահ մարմիններին է տրամադրվել 44 նյութ (Հավելվածը կցվում է), որից 23-ի մասով տրվել է իրավական գնահատական (մնացածի մասով ուսումնասիրությունները շարունակվում են) և հարուցվել է 45 քրեական գործ: Համաձայն ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության՝ հարուցված քրեական գործերի մասով պատճառված վնասի նախնական չափը կազմում է մոտ 3 միլիարդ 413 միլիոն 300 հազար դրամ:

Ստորև ներկայացված են 2020 թվականին իրականացված ռիսկերի վրա հիմնված հաշվեքննությունների առավել ուշագրավ արդյունքները:

Ջրօգտագործող ընկերությունների վերաբերյալ հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

Ջրօգտագործող ընկերություններին (ԶՕԸ) 2019թ. պետական բյուջեով նախատեսվել է տրամադրել 7.4 միլիարդ դրամի պետական ֆինանսական աջակցություն, սակայն փաստացի հատկացվել է 14.7 միլիարդ դրամ, այսինքն՝ հավելյալ 7.3 միլիարդ դրամ, որը շուրջ երեք անգամ գերազանցում է նաև նախորդ տարիներին այդ ուղղությամբ հատկացված պետական ֆինանսական աջակցության չափը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ աննախադեպ մեծության այդ աջակցությունը հատկացվել է՝ առանց ջրային կոմիտեի կողմից ամրագրված չափորոշիչների և մեխանիզմների սահմանման: Արդյունքում, փաստացի հատկացված բյուջետային աջակցությունը՝ 14.7 միլիարդ դրամ, շուրջ 4 անգամ գերազանցել է կառավարության կողմից հաստատված ռազմավարությամբ սահմանված 3.7 միլիարդ դրամի չափը: Ավելին, փաստացի ոռոգված հողատարածքները 2018 թվականի համեմատ պակասել են 10,3 հազ. հեկտարով: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ 2019 թվականին ԶՕԸ-երին տրամադրված սուբսիդիայի գումարների զգալի մասը (5.9 միլիարդ դրամ) ՀՀ

ՏԿԵՆ ջրային կոմիտեի և ԶՕԸ-երի միջև կնքված պայմանագրի խախտմամբ ուղղվել են մինչև 2019թ. հունվարի 1-ը գոյացած կրեդիտորական պարտքերի մարմանը, որոնք 2018թ. վերջին հասել են աննախադեպ չափերի՝ 9.4 միլիարդ դրամի: ՀՀ կառավարությունը կրեդիտորական պարտքերի խնդրի կարգավորման վերաբերյալ հանձնարարական է ներկայացրել, որը, սակայն, ժամանակին չի կատարվել, փոխարենը, առանց կուտակված պարտքերի հիմնավորվածությունը և գոյացման պատճառներն ուսումնասիրելու, 2019-ին պետական բյուջեից ԶՕԸ-երին հատկացվել են իրենց մեծությամբ նախադեպը չունեցող ֆինանսական միջոցներ: Կարևոր է նշել նաև, որ վերջին 7 տարվա ընթացքում ԶՕԸ-երում չի իրականացվել աուդիտ կամ մշտադիտարկում, ինչը ևս վկայում է համակարգի անարդյունավետ կառավարման մասին: ԶՕԸ-երի գործունեությունը համակարգող-կանոնակարգող խորհուրդը, որի գործադիր մարմինը ջրային կոմիտեն է, 2019թ. չի անդրադարձել տարվա սկզբում ԶՕԸ-երում կուտակված կրեդիտորական պարտքերի աննախադեպ չափերին, դրանց գոյացման պատճառներին և այդ ուղղությամբ չի կայացրել համապատասխան որոշումներ:

«Աերացիա» կեղտաջրերի մաքրման «նոր» կայանի վերաբերյալ հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

2008թ. հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած՝ ՀՀ կառավարության և Ֆրանսիայի կառավարության միջև ֆինանսական արձանագրության համաձայն՝ վարկային միջոցների հաշվին 2015-2017թթ. կառուցվել է Երևան քաղաքի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման նոր կայանը, քանի որ գործողը շահագործման համար պիտանի չէր: ՀՊ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 10.5 միլիոն եվրո վարկային միջոցներով ստեղծված կայանն արդեն 4 տարի շարունակ սահմանված կարգով չի անցնում փորձաքննություն և չի գործարկվում: Կայանը կառուցած կապալառուն բազմիցս դիմել է պետական և համայնքային մարմիններին՝ հանձնում և ընդունում կատարելու համար, սակայն հարցն առ այսօր լուծված չէ: Փաստորեն, «նոր» կայանը շուրջ 4 տարի է չի շահագործվում՝ շարունակելով առաջացնել լուրջ բնապահպանական խնդիրներ:

Ճանապարհաշինության ոլորտի վերաբերյալ հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

Կառավարության որոշմամբ հաստատված՝ ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների ցանկում որոշ ճանապարհների նշանակության դասակարգումը չի համապատասխանում ավտոմոբիլային ճանապարհների մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջներին: Արդյունքում, 554 կմ ճանապարհներ չեն համապատասխանում օրենքի չափանիշներին, ինչի հետևանքով դրանց պահպանման արժեքը 546 միլիոն դրամով գերազանցել է իրենց փաստացի նշանակության համար նախատեսված արժեքները: 569 կմ ճանապարհները, որոնց պահպանության համար վճարվել է 2 միլիարդ 41 միլիոն դրամ, մարզային նշանակության ճանապարհներ են, հետևաբար դրանց տնօրինողները պետք է լինեին մարզպետները: 93 կմ ճանապարհները, որոնց պահպանման համար վճարվել է 148 միլիոն դրամ՝ դաշտամիջյան են և դրանց պահպանումը օրենսդրությամբ չի նախատեսվում:

Թվով 10 օբյեկտներում միևնույն աշխատանքները ներկայացված են և՛ պահպանման, և՛ վերանորոգման պայմանագրերում: Արդյունքում, նույն կապալառուին միևնույն աշխատանքը պատվիրել են կրկնակի, և ավելի է վճարվել 185.3 միլիոն դրամ: Բացի այդ, 1 տարի երաշխիքային ժամկետի առկայության պայմաններում, ճանապարհների վիճակները վերանորոգումից հետո չեն գնահատվել երաշխիքային, այլ թողնվել են նույն վիճակի, ինչի արդյունքում ավելի է վճարվել 78 միլիոն դրամ:

Ձյան տեղումների բացակայության պայմաններում կատարողականներից 122.5 միլիոն դրամը չի նվազեցվել: Պահպանման աշխատանքների համար ամսական կազմվել են թվով 3 միջանկյալ դիտարկման ամփոփագրեր: Սակայն, գործուղումներով հիմնավորվել է ընդամենը 1-ը:

Գնանշման աշխատանքներն ընդունելիս չեն ստուգվել պարտադիր ստուգման ենթակա գնանշման պայծառության, լուսանդրադարձման և լուսարտացողման գործիքները: Չեն հիմնավորվել ներկանյութի չափանիշների համապատասխանությունը: Ընդհանրապես չեն ստուգվել պարտադիր ստուգման ենթակա ճանապարհային պատվածքի և անիվի կառչման գործակիցները, իսկ 3.7 միլիարդ դրամի աշխատանքների մասով՝ պարտադիր ստուգման ենթակա ճանապարհային պատվածքի հարթությունը: 2.6 միլիարդ դրամի աշխատանքներ իրականացվել են առանձին պահանջվող որակի տեխնիկական հսկողությամբ: Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական ավտոճանապարհի 701 միլիոն դրամի ասֆալտապատման աշխատանքների ասֆալտբետոնյա խառնուրդը

չի համապատասխանում նորմերի պահանջներին: 6 պայմանագրերի մասով աշխատանքները պահանջներին համապատասխան չկատարելու պարագայում պատվիրատուն միակողմանի չի լուծել պայմանագրերը, փոխհատուցում չի պահանջել, ինչպես նաև կապալառուին սև ցուցակում ներառելու գործընթաց չի իրականացրել: Ավելին, 2020թ. նախարարությունն այդ ընկերությունների հետ կնքել է նոր պայմանագրեր և համաձայնագրեր: Ընդ որում, նշվածներից թվով 3 պայմանագրի դեպքում, չունենալով նման իրավասություն, պատվիրատուն կասեցրել է պայմանագիրը, հնարավորություն տալով կապալառուին խուսափելու պայմանագրով նախատեսված տույժից կամ տուգանքից: Ավելին, պայմանագրով չունենալով կանխավճար տալու պարտավորություն, պայմանագրային ողջ գումարը փոխանցել է կապալառուին՝ որպես կանխավճար: 96 միլիոն դրամի աշխատանքներ ասֆալտբետոնյա ծածկի միջին խտությունները նորմերին չհամապատասխանելու հիմքով պետք է մերժվեին, սակայն չեն մերժվել:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության վերաբերյալ հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

2019 թվականին Երևանում անցկացվեց SS համաշխարհային համաժողով, որը կազմակերպել էր «ԱՏՁՄ» ՀԿ-ն: Այս նպատակով 2015-2019թթ. ընթացքում կառավարությունը ՀԿ-ին հատկացրել է 362 միլիոն դրամ կանխավճար՝ պայմանով, որ միջոցառման ավարտից հետո համաժողովի կազմակերպումից ստացված գումարների հաշվին կանխավճարը պետք է վերադարձվի պետական բյուջե: Համաժողովի անցկացման նպատակով կառավարությունը հաստատել է նախահաշիվ և հանձնարարել է ԲՏԱ նախարարությանը վերահսկել նախահաշվի կատարումը և ՀԿ-ի կողմից իրականացվող բոլոր ծախսերն ու եկամուտները: ՀԿ-ի կողմից կատարված ծախսերը գերազանցել են նախահաշվով սահմանված ծախսերը 791 միլիոն դրամով: Սակայն այս մասով կազմակերպության կողմից հիմնավորումներ չեն ներկայացվել, իսկ վարչապետի որոշմամբ սահմանված ծախսերի նախահաշվի փոփոխություն չի կատարվել:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ նախարարությունը պահանջվող վերահսկողությունը չի իրականացրել, իսկ ՀԿ-ն նախատեսված հաշվետվությունները նախարարություն չի ներկայացրել: Ավելին, համաժողովի ավարտից հետո ՀԿ-ն դիմել է կառավարությանը՝ խնդրելով ստացված կանխավճարի մնացորդը՝ 348 միլիոն դրամ, չվերադարձնել պետական բյուջե: Թեև այս առաջարկին դեմ են եղել ՀՀ ֆինանսների և ԲՏԱ նախարարությունները (ըստ վերջիններիս այն հակասել է օրենսդրության պահանջներին),

այնուամենայնիվ, կառավարությունը պարզապես ներել է ՀԿ-ի պարտավորությունը, ինչի արդյունքում 348 միլիոն դրամ չի վերադարձվել պետական բյուջե:

Ոստիկանությունում իրականացված հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ ոստիկանություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2018թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

Ոստիկանության և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ի միջև կնքված գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն՝ հատուցվում են հավատարմագրային կառավարման հանձնված համակարգերի շահագործման, կառավարման և տեխնիկական սպասարկման նպատակով փաստացի կատարված ծախսերը: Ոստիկանությունը փոխհատուցել է կառավարչի կողմից ներկայացված նպաստների (եկամտային հարկից նվազեցվող գումարներ) գծով 42.7 միլիոն դրամի չափով ծախսն այն դեպքում, երբ այդ գումարը մեկ անգամ արդեն փոխհատուցվել էր պետության կողմից: Ընդհանուր աշխատավարձի ֆոնդերից որպես փոխհատուցում ավելի է տրվել շուրջ 74 միլիոն դրամ: Հատկանշական է, որ ոստիկանությունը փոխհատուցում է նաև ընկերության ղեկավար անձնակազմի բավական բարձր աշխատավարձը: Օրինակ, տնօրենի աշխատավարձը կազմում է 2 միլիոն դրամ, իսկ տնօրենի խորհրդականինը՝ 965 հազար դրամ: Կառավարիչը տեխնիկական սպասարկման ծառայությունների պայմանագիր է կնքել մի կազմակերպության հետ, որը գրանցվել է սույն պայմանագրի կնքումից 7 օր առաջ և 2018-2019թթ. ունեցել է 78 հազար դրամ աշխատավարձով 1 կամ 2 աշխատակից: Սույն պայմանագրի մասով, որպես կատարված ծախսերի փոխհատուցում, կառավարիչը ոստիկանությունից ստացել է շուրջ 80.6 միլիոն դրամ: Կառավարիչը նաև 141 միլիոն դրամ փոխհատուցում է ստացել տեսանկարահանող սարքերի տպասալիկների տարեկան ծրագրային ապահովման հեղինակային իրավունքի լիցենզիաների համար: Իրավասու մարմնում նման լիցենզիայի կամ մտավոր սեփականության օբյեկտ հաշվառված չէ: Արդյունքում չի հիմնավորվել այդ ծախսերի անհրաժեշտությունը:

Տուգանքների գանձման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2018-2019թթ. 326 անձինք կատարել են տարեկան 100 և ավելի խախտումներ՝ ընդհանուր 50 հազար խախտում՝ 471 միլիոն դրամի: Սակայն դրանցից ճՈ-ին վճարումներ չեն կատարվել և հետագայում ԴԱՀԿ-ի կողմից այդ տուգանքներից որևէ մուտքեր չեն ապահովվել: Օրինակ, անձը կատարել է 210 խախտում՝ 11 միլիոն դրամի և չի վճարել: Մի շարք դեպքերում տուգանքները սահմանված ժամկետում չվճարվելուց հետո դրանք չեն ուղարկվել ԴԱՀԿ ծառայություն:

2019թ. կնքվել է 678.8 միլիոն դրամի հանդերձանքի գնման պայմանագրեր, որոնցից շուրջ 216.7 միլիոն դրամի չափով մատակարարում չի իրականացվել:

Սույնով պայմանավորված՝ ոստիկանության կողմից համապատասխան գործողությունների չիրականացման պատճառով պետական բյուջե չի փոխանցվել պայմանագրի լուծարման պարագայում բյուջե վճարման ենթակա՝ պայմանագրերի ապահովման 10 տոկոսի չափով գումարը՝ 21.6 միլիոն դրամ: Չի հաշվարկվել և չի գանձվել նաև չմատակարարված վերոհիշյալ ապրանքների մատակարարման ժամկետների ուշացված օրերի համար պայմանագրով նախատեսված տույժերը՝ առնվազն 2.9 միլիոն դրամ: Ոստիկանությունն ուշացրել է նաև համագործակցող մատակարարներին սև ցուցակում ընդգրկելու առաջարկությունը, որի պատճառով էլ գնումների բողոքներ քննող անձի կողմից մերժվել է առաջարկը: Արդյունքում որոշ մատակարարներ մասնակցել են հաջորդ տարվա գնման գործընթացներում և ճանաչվել հաղթողներ:

2018-2019թթ. «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ կնքվել է 1.1 միլիարդ դրամի պայմանագրեր: 1 միավորի փոստային ծառայության դիմաց վճարվել է 350 դրամ: Այդ ծառայության համար սահմանված սակագինը 280 դրամ է կամ 70 դրամով պակաս: Լրացուցիչ ծառայությունների մատուցման արժեքները սահմանված չեն պայմանագրերով, և հնարավոր չէ գնահատել սակագինը 20%-ից ավելի վճարված գումարների հիմնավորումը: Հատկանշական է, որ ԴԱՀ-ը «Հայփոստ» ՓԲԸ-ից նման ծառայություն ձեռք է բերում 70 դրամից մինչև առավելագույնը 280 դրամով:

Գնանշման, լուսանշանների սպասարկման, ճանապարհների նշանների տեղադրման աշխատանքների 1.6 միլիարդ դրամի պայմանագրերը կնքվել են էապես անհամապատասխանություններով՝ բանկային երաշխիքների, նախկինում առկա փորձի, առնվազն 45 աշխատակցի առկայության և այլնի մասով:

Բնապահպանության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի հաշվեքննության առումով կան արդեն հարուցված քրեական գործեր, հայտնաբերվել են մի շարք խնդիրներ: Այսպես, պարզվել է, որ տրամադրվել են անտառահատման տոմսեր, որոնցում օգտագործման տեսակը (սահմանված ընթացակարգերի խախտմամբ) նշվել է թափուկի հավաքում, սակայն հստակ չէ, թե տոմսերում նշվածն իրոք թափո՞ւկ էր, թե՞ վառելափայտ: Նման կերպ տրամադրվել է 27 հազ. խ. մ. անտառահատման տոմսեր: Մասնաճյուղերը գործող կարգի համաձայն անտառահատման տոմսերը լրացնում և տրամադրում են անտառօգտագործողներին: Անտառահատման տոմսերի ուսումնասիրությունից պարզվել է, որ տոմսերը չեն տրամադրվել անտառօգտագործողներին և որպես անտառօգտագործող նշել են հենց մասնաճյուղը: Ուսումնասիրելով անտառների

արբանյակային պատկերները և դրանց վերլուծման արդյունքում փոփոխված տարածքների տեղեկատվությունը, համադրելով անտառահատման տոմսերի հետ՝ պարզվել է, որ առկա են մի շարք ռիսկային հատվածներ: Իրականացված ընտրանքային այցելությունների ընթացքում պարզվել է, որ առկա են բազմաթիվ հատված ծառեր, որոնք հաշվառված չէին որպես ապօրինի հատումներ: Խնդիրը ՀՊ ուշադրության կենտրոնում կլինի նաև 2021 թվականին:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից 2017-2018թթ. իրականացվել է 1,030 ձեռքբերում՝ 227.6 միլիոն դրամի չափով, որի դիմաց վճարվել է 198.5 միլիոն դրամ, սակայն այս ձեռքբերումները չեն կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ բնապահպանության նախարարի 2018թ. հունիսի 22-ի հրամանով հաստատվել է անտառային կոմիտեի կանոնադրությունը, որի համաձայն՝ կոմիտեի գործառույթներից է անտառային պետական ծառայությանն օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումը: Անտառային պետական ծառայություն ստեղծելու նախագիծը մշակվել և քննարկման է ներկայացվել 2018թ. մարտի 16-ին: Անտառային կոմիտեն գործում է դեռևս 2018թ. հունիսի 22-ից, սակայն իրեն վերապահված գործառույթները լիարժեքորեն չի կարողանում իրականացնել, քանի որ անտառային պետական ծառայության մասին օրենքի նախագիծը մինչ օրս գտնվում է լրամշակման փուլում:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի թվով 11 շահառուի անվամբ կատարվել են անշարժ գույքի գործարքներ, որոնցից 10-ի մասով խնամակալ հաստատությունը տեղյակ չի եղել, մինչդեռ համաձայն գործող օրենսդրության պահանջների՝ պետք է իրականացվեին խնամակալի միջոցով: Արձանագրվել են դեպքեր, երբ շրջանավարտները կնքել են բնակարանների առուվաճառքի պայմանագրեր, սակայն սահմանված ժամկետում չեն ներկայացվել պետական գրանցման: Արդյունքում 7 դեպքով պայմանագրերն անվավեր և առոչինչ են ճանաչվել: Տվյալ պարագայում վճարված գումարի շուրջ 44 միլիոն դրամի հետագա տնօրինումն անորոշ է: 2020թ. հուլիսի 24-ի դրությամբ 157 անձանց մերժվել է բնակարանի գնման վկայագրի տրամադրումը: Նրանցից անորոշ մեթոդով նախարարությունն ընտրել է թվով 24 անձ, որոնց համար նույն օրը կառավարություն է ներկայացվել որոշման նախագիծ (հաստատվել է հուլիսի

30-ին): Անհավասար և ոչ միատեսակ մոտեցում ցուցաբերելու արդյունքում վերոհիշյալ անձանց տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր:

Արձանագրվել է դեպք, երբ քաղաքացու մահից երկու օր հետո վերջինս ստացել է 2 հատ պրոթեզի կոշիկներ: Ավելին, համապատասխան համակարգում առկա է մահից հետո շահառուի կողմից պարագաներ ստանալու նպատակով լրացված դիմումը և շահառուի անձնական քարտը:

Փրկարար ծառայության հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

2020թ. փրկարար ծառայության առանձնահատուկ պայմանների համար նախատեսված հավելավճարների շուրջ 32%-ը՝ 592.8 միլիոն դրամ, վճարվել է կենտրոնական ապարատի աշխատակիցներին, ովքեր ծառայության առանձնահատուկ պայմաններին չեն առնչվել և հրշեջ-փրկարարական աշխատանքներին ուղղակի մասնակցություն որևէ կերպ չեն ունեցել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: